Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի **պատմության (9 դասաժամ), իմ հայրենիքը (3 դասաժամ), իմ հայրենիքը և աշխարհը (2 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ), աշխարհագրության (8 դասաժամ), բնության (3 դասաժամ), քիմիայի (7 դասաժամ) և ռուսաց լեզվի (6 դասաժամ)** ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար՝3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդված 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025 թ. սեպտեմբերի 19-ից 2025 թվականի հոկտեմբերի 02-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը **10:00**-ից **14:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Պատմության, իմ հայրենիքը, իմ հայրենիքը և աշխարհը, հասարակագիտության, ռուսաց լեզվի, ուսուցչի թափուր տեղերի համար մրցույթը տեղի կունենա **2025 թ. հոկտեմբերի 03-ին՝** ժամը **14:00**-ին, **աշխարհագրության, բնության , քիմիայի** ուսուցչի թափուր տեղերի համար՝ **2025 թ. հոկտեմբերի 06-ին՝** ժամը **14:00**-ին ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. Վահրամաբերդ, 16-րդ փողոց, 2-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 207590 հեռախոսահամարով: